



*Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության
համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746*

Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր (MHP) Բողոքներ, գանգատներ և արդար լսումներ

Յրապ.#7134.10 - Armenian, հուլիս, 2018թ.

Յուրաքանչյուր վարչաշրջան Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր (MHP, Mental Health Plan) ունի: MHP-ները կամ ուղղակիորեն հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ են տրամադրում, կամ դրանք կազմակերպում և վճարում են հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների համար՝ այլ մատակարարների միջոցով:

Այս հրապարակման մեջ միայն քննարկվում են Բողոքները, գանգատների և արդար լուծումները՝ ընդդեմ վարչաշրջանի MHP-ի: Medi-Cal-ի կողմից ֆինանսավորվող հոգեկան առողջության ընդհանուր առողջապահական ծառայությունների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ ստանալու համար տե՛ս՝ [«Medi-Cal Managed Care Plan-ը և հոգեկան առողջության ծառայությունները»](#) հրապարակում 5084.01.-ը¹

Եթե Դուք դժգոհ եք այն ծառայություն(ներ)ից, որն(որոնք) ստացել եք վարչաշրջանի հոգեկան առողջության հասատատությունում կամ մատակարարից, կամ համաձայն չեք Ձեր MHP-ի կողմից տրված որոշման հետ, հետևյալ տեղեկությունները կօգնեն որոշել, թե ինչպես շարունակել Ձեր այս խնդրի հետ:

Բողոքն ընդհանուր գանգատ է այն խնդրի շուրջ, որն ունեցել եք Ձեր MHP-ի հետ: Գանգատն անհամաձայնություն է այն որոշման շուրջ, որը տրվել է Ձեր հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ: Ստորև և՛ բողոքը և՛ գանգատն ավելի մանրամասն ներկայացված են:

ԲՈՂՈՔՆԵՐ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Դուք կարող եք բողոք ներկայացնել, եթե դժգոհ եք որևէ դեպքից, որն ունեցել եք Ձեր MHP-ի հետ: Օրինակ՝ եթե Դուք դժգոհ եք ինսամքի կամ տրամադրված ծառայությունների որակից կամ որևէ աշխատակցի վերաբերմունքից:²

¹ *Տե՛ս նաև՝* Կալիֆորնիայի Առողջապահության և մարդկանց տրամադրվող ծառայությունների գործակալության MHSUDS տեղեկատվական ծանուցում թիվ 16-061, [ՀՍՏԱԿԵՅՈՒՄՆԵՐ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ MEDI-CAL-Ի ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՆ ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ MEDI-CAL MANAGED CARE HEALTH ԾՐԱԳՐԵՐՈՒՄ \(2016\)](#). («Վերադառնալ հիմնական փաստաթղթին»).

² 42 C.F.R. §438.400(b).

Ինչպե՞ս պետք է իմ MHP-ի դեմ բողոք ներկայացնեմ:

Դուք կարող եք ցանկացած պահի Ձեր MHP-ի դեմ բանավոր կամ գրավոր բողոք ներկայացնել: ³ Յուրաքանչյուր վարչաշրջան պետք է MHP մատակարարների բոլոր կենտրոններում ծանուցումներ փակցնի և գրքույկներ տրամադրի՝ բացատրելով բողոքարկման և զանգատարկման գործընթացները: ⁴ Դուք կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի MHP-ի անվճար հեռախոսահամարին՝ բողոքարկման հարցում օգնություն ստանալու համար: Դուք նաև կարող եք բողոքարկման ձևաթղթեր և Ձեր կողմից հասցեագրված ծրարներ ձեռք բերել մատակարարների կենտրոններում:

MHP-ն պետք է Ձեզ տեղեկացնի, որ ստացել է Ձեր բողոքը:⁵

Ե՞րբ պատասխան կստանամ իմ բողոքի վերաբերյալ:

Ձեր MHP-ն պետք է բողոքը քննարկի՝ բողոքն ստանալու օրից սկսած մեկ օրվա ընթացքում՝ բողոքը մատյանում գրանցելով:⁶ MHP աշխատակազմը մատչելի կլինի՝ Ձեզ տեղեկություններ տրամադրելու Ձեր բողոքի կամ դրա կարգավիճակի վերաբերյալ:⁷ MHP աշխատակազմը բողոքի վերաբերյալ որոշում կկայացնի և Ձեզ կձանուցի դրա արդյունքը: Նահանգային օրենքի համաձայն Կալիֆորնիայի MHP-ները պետք է որոշում կայացնեն բողոքի վերաբերյալ և բողոքն ստանալու օրից սկսած 60 օրացուցային օրվա ընթացքում Ձեզ ծանուցեն այդ մասին:⁸

³ 42 C.F.R. § 438.402(c)(3)(ii); 9 C.C.R. §1850.206(a).

⁴ 9 C.C.R. §1850.205(c)(1)(B).

⁵ 42 C.F.R. §438.406(b)(1); 9 C.C.R. §1850.205(d)(4).

⁶ 9 C.C.R. §1850.205(d)(1).

⁷ 9 C.C.R. §1850.205(d)(3).

⁸ 9 C.C.R. §1850.206(b): Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ դաշնային օրենքի համաձայն MHP-ները պետք է բողոքը լուծեն 90 օրվա ընթացքում: 42 C.F.R. §438.408(b)(1). [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#).

Եթե կարծում եք, որ Ձեր բողոքը պետք է անհապաղ քննարկվի Ձեր առողջության անմիջական և լուրջ սպառնալիքի պատճառով, Դուք կարող եք արագացված բողոք խնդրել: MHP-ն Ձեր արագացված բողոքը 72 ժամվա ընթացքում կքննարկի:⁹

ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆԳԱՏ

Գանգատը MHP-ի կողմից գործողության վերանայում է: Դուք կարող եք գանգատ ներկայացնել, եթե MHP-ն Նպաստի բացասական որոշում կայացնի: Դուք պետք է գանգատ ներկայացնեք և ավարտեք գանգատարկման գործընթացը՝ նախքան արդար լսման դիմում ներկայանցելը:¹⁰

Ի՞նչ է Նպաստի բացասական որոշումը:

Նպաստի բացասական որոշումը մի որոշում է, որը տրվում է MHP-ի կողմից, որն ազդում է Ձեզ մատուցվող ծառայությունների վրա: Նպաստի բացասական որոշումը կարող է լինել ստորև ներկայացված յոթ գործողություններից որևէ մեկը՝

1. Եթե Դուք մերժվել կամ սահմանափակ կերպով եք օգտվում ծառայությունից.
2. Եթե Ձեր ծառայությունը կրճատվել, ժամանակավորապես դադարեցվել կամ ավարտվել է.
3. Եթե Ձեր MHP-ն մերժում է Ձեզ վճարել ծառայության համար.
4. Եթե Ձեզ ժամանակին ծառայություն չի տրամադրվում.
5. Եթե MHP-ն սովորական բողոքների և գանգատների դեպքում ժամանակի սահմաններում չի գործում:
6. Եթե Դուք ապրում եք գյուղական տարածքում, որտեղ մատակարարների պակաս կա և զրկված եք ցանցից դուրս ծառայություններ ձեռք բերելու իրավունքից. կամ
7. Եթե Ձեզ մերժում են ծախսի կիսման, համավճարումների, պարգևավճարների, պահումների, համապահովագրության և

⁹ Կալիֆորնիայի Առողջապահության և ապահովության օրենսգիրք, §1368.01(b):

¹⁰ 42 C.F.R. §438.408(f)(i):

անդամագրվածի այլ ֆինանսական պարտավորությունների
քննարկման խնդրանքը:¹¹

Երբ MHP-ն մերժում կամ փոփոխում է մատակարարի կողմից
նպաստառուին ուղղված ծառայության համար MHP լիազորման
խնդրանքը, ապա MHP-ն պետք է Ձեզ Գործողության ծանուցում
տրամադրի:¹² Գործողության ծանուցումը գրավոր ծանուցում է MHP-ից՝
Ձեզ տեղեկացնելու, որ MHP-ն նպաստի բացասական որոշում է
կայացրել:

Դուք պետք է սովորական կամ արագացված բողոք ներկայացնեք MHP-
ից ստացած Գործողության ծանուցումն ստանալու ամսաթվից սկսած 60
օրացուցային օրվա ընթացքում:¹³

Եթե Դուք Գործողության ծանուցում չստանաք, բայց Ձեր
ծառայությունները մերժվեն, կրճատվեն, ժամանակավորապես
դադարեցվեն կամ ավարտվեն, Դուք ամեն դեպքում պետք է
հնարավորինս շուտ գանգատ ներկայացնեք:

Ինչպե՞ս պետք է գանգատ ներկայացնեմ:

Դուք կարող եք սովորական գանգատ ներկայացնել՝ բանավոր կամ
գրավոր: Եթե Դուք գանգատը բանավոր ներկայացնեք, Դուք պետք է
դրան հաջորդող գրավոր գանգատ ներկայացնեք:¹⁴ Դուք պետք է Ձեզ
համար Ձեր գրավոր գանգատի մեկ օրինակը պահեք:

Ձեր MHP-ն պետք է Ձեզ տեղեկացնի, որ ստացել է Ձեր գանգատը՝ այն
ստանալուց հետո 5 օրվա ընթացքում Ձեզ գրավոր տեղեկացնելով այդ
մասին:¹⁵

¹¹ 42 C.F.R. §438.400(b).

¹² 9 C.C.R. §1850.210(a).

¹³ 42 C.F.R. §438.402(c)(2)(ii):

¹⁴ 42 C.F.R. §438.402(c)(3)(ii), 9 C.C.R. §1850.207(a-b):

¹⁵ 42 C.F.R. §438.406(b)(2)(1), 9 C.C.R. §1850.205(d)(4).

Ես կարո՞ղ եմ շարունակել նպաստներ ստանալ, եթե գանգատներ կայացնեմ:

Որպեսզի Ձեր նպաստները շարունակվեն այն ժամանակամիջոցի համար, երբ Դուք գանգատարկման գործընթացով եք անցնում, Դուք պետք է «օգնության վճարման առկախում» խնդրեք՝ գործողությունների ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում կամ նախքան որոշումը ուժի մեջ մտնելու ամսաթիվը, որ ամսաթիվը որ ավելի ուշ է:¹⁶

Իմ գանգատի վերաբերյալ որոշումը ե՞րբ կստանամ:

Կալիֆորնիայի օրենքի համաձայն Ձեր MHP-ն պետք է գանգատն ստանալուց հետո 45 օրվա ընթացքում որոշում կայացնի:¹⁷ MHP-ն կարող է լրացուցիչ 14 օր վերցնել, եթե Դուք երկրաձգում խնդրեք կամ MHP-ն որոշի, որ լրացուցիչ տեղեկատվության կարիք կա, և հետաձգումը բխում է Ձեր շահերից:¹⁸

Երբ Ձեր MHP-ն որոշում կայացնի Ձեր գանգատի վերաբերյալ, նա Ձեզ որոշումը բացատրող Գանգատի լուծման ծանուցում կուղարկի: Գանգատի լուծման ծանուցումը պետք է ներառի լուծման գործընթացի արդյունքները և դրա ավարտի ամսաթիվը, Նահանգային լսում խնդրելու

¹⁶ 42 C.F.R. §438.420(a-c):

¹⁷ 9 C.C.R. §1850.207(c): Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ դաշնային ժամակացույցները տարբեր են: Դաշնային օրենքի համաձայն Ձեր MHP-ն պետք է սովորական գանգատն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Գանգատի լուծման ծանուցում կոչվող որոշում տրամադրի: 42 C.F.R. §438.408(b)(2-3): [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#).

¹⁸ *Id.*: MHP-ն կարող է լրացուցիչ 14 օր խնդրել, եթե MHP-ն ցույց տա, որ նրանք լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեն և որ հետաձգումը բխում է Ձեր շահերից: 42 C.F.R. §438.408(c)(1)(i-ii): Եթե MHP-ն այդ ժամանակահատվածում որոշում չտրամադրի, դա մերժում կհամարվի: Կալիֆորնիայի Առողջապահության և մարդկանց տրամադրվող ծառայությունների գործակալություն, All Plan Letter 17-006, [ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՁԵՎԱՆՍՈՒԾՆԵՐ ԵՎ «ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ» ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ](#) (2017): [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#).

իրավունքը և այն, թե ինչպես պետք է այդ խնդրանքը արվի, ինչպես նաև նպաստներ խնդրելու և ստանալու իրավունքը մինչ լսումն ամկախ է և ինչպես կատարել այդ խնդրանքը:¹⁹

ԱՐԱԳԱՑՎԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐ՝ ՈՒՂԴՎԱԾ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻՆ

Դուք կարող եք արագացված բողոք ներկայացնել Վարչաշրջանի հոգեկան առողջության բաժնին, եթե Դուք կամ Ձեր մատակարարը վստահ եք, որ ավելի երկար տևող սովորական գանգատը կարող է լրջորեն վտանգել Ձեր առողջությունը, կյանքը կամ առավելագույն գործունակությունը պահպանելու կարողությունը:²⁰

Դուք կարող եք բանավոր խնդրանք ներկայացնել MHP-ին՝ արագացված գանգատի համար: Ի տարբերություն սովորական գանգատների, Դուք ստիպված չեք գրավոր տարբերակով հետևել արագացված գանգատի Ձեր բանավոր խնդրանքին:²¹ Սակայն, մենք առաջարկում ենք, որ Դուք միշտ գրավոր տարբերակն ուղարկեք և մեկ օրինակը պահեք Ձեզ մոտ:

MHP-ն պետք է Ձեզ տեղեկացնի, որ ստացել է արագացված գանգատը:²²

Ե՞րբ կստանամ իմ արագացված գանգատի վերաբերյալ որոշումը:

Կալիֆորնիայի օրենքի համաձայն Ձեր MHP-ն պետք է իր որոշման մասին Ձեզ տեղեկացնի Ձեր գանգատն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:²³

¹⁹ 42 C.F.R. §438.408(e):

²⁰ 42 C.F.R. §438.410(a), 9 C.C.R. § 1850.208(a):

²¹ 42 C.F.R. §438.406(b)(3); 9 C.C.R. §1850.208(b).

²² 42 C.F.R. §438.406(b)(1); 9 C.C.R. §1850.205(d)(4).

²³ 9 C.C.R. §1850.208(d): Խնդրում ենք ի սկստի ունենալ, որ դաշնային ժամակացույցները տարբեր են: Դաշնային օրենքի համաձայն Ձեր MHP-ն պետք է որոշման մասին Ձեզ տեղեկացնի Ձեր գանգատն ստանալուց 72 ժամ անց: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#)).

MHP-ն կարող է լրացուցիչ 14 օր խնդրել, եթե Դուք երկարաձգում եք խնդրում կամ եթե MHP ցույց տա, որ իրենք լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեն։²⁴

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄՆԵՐ

Նահանգային արդար լսումը որոշման կամ Ձեր MHP-ի կողմից կատարած գործողության վերանայում է: Դուք կարող եք արդար լսման դիմում ներկայացնել, եթե համաձայն չեք Ձեր գանգատին վերաբերող Ձեր MHP-ի որոշման հետ:²⁵

Ինչպե՞ս պետք է նահանգային արդար լսում խնդրեմ:

2017թ. հուլիսից հետո, Դուք **պետք է** գանգատ ներկայացնեք, նախքան կկարողանաք նահանգային արդար լսման դիմում ներկայացնել: Խնդրում ենք նայել ստորև տրված տեղեկատվությանը, որը վերաբերում է ներքին գանգատարկման գործընթացին:

Երբ Դուք անցնեք գանգատի գործընթացով, եթե համաձայն չիկնեք MHP-ի կողմից կայացված որոշման հետ, Դուք կարող եք նահանգային արդար լսում խնդրել Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների դեպարտամենտից:²⁶ Նահանգային արդար լսումն անկախ վերանայում է, որն արվում է՝ որոշելու MHP-ի ներքո ունեցած Ձեր իրավունքները: MHP-ները պետք է Ձեզ տեղեկատվություն տրամադրեն արդար լսում խնդրելու Ձեր իրավունքի և այն խնդրելու ձևի մասին:²⁷

²⁴ MHP-ն կարող է լրացուցիչ 14 օր խնդրել, եթե Դուք երկարաձգում եք խնդրում կամ եթե MHP ցույց տա, որ իրենք լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեն: ([«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)):

²⁵ 42 C.F.R. §438.402(c)(1)(i):

²⁶ 42 C.F.R. §438.402(c)(1)(i):

²⁷ 42 C.F.R. §438.408(e)(i), 9 C.C.R. 1850.207(h)(3):

Եթե MHP-ն ծանուցում չտրամադրի կամ որևէ այլ կերպ չհամապատասխանի ծանուցման և ժամանակացույցի պահանջներին, Դուք կարող եք նահանգային արդար լսում խնդրել:²⁸

Դուք 120 օր ունեք՝ նահանգային արդար լսում խնդրելու՝ սկսած գանգատի վերաբերյալ MHP-ի կայացրած որոշման ամսաթվից:²⁹ Եթե Ձեր MHP-ից գրավոր որոշում չստանաք, Դուք պետք է հնարավորինս շուտ նահանգային արդար լսման Ձեր խնդրանքը ներկայացնեք:

Ես կարո՞ղ եմ իմ նպաստները պահել նահանգային արդար լսման ժամանակ:

Դուք կարող եք շարունակել ստանալ Ձեր նպաստները, մինչ նահանգային արդար լսումն առկախ է, եթե Դուք վճարված օգնության առկախում խնդրեք 10 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած գանգատին վերաբերող որոշման բնօրինակի կամ որոշման ուժի մտնելու ամսաթվից, որն ավելի ուշ է:³⁰

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԾԻՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք նաև երկրորդ կարծիք հարցնելու իրավունք ունեք, եթե համաձայն չեք հոգեկան առողջության Ձեր մասնագիտացված ծառայությունների մերժմանը վերաբերող որոշման հետ: Վերանայումը պետք է արվի հոգեկան առողջության լիազորված մասնագետի կողմից, ով առաջին որոշումը կայացնողը չէ: MHP-ն կորոշի, թե արդյոք այս վերանայումը թղթային վերանայում է, թե այն պետք է անձամբ արվի:³¹ Դուք դեռ կարող եք բողոք կամ գանգատ ներկայացնել ցանկացած մերժման համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

²⁸ 42 C.F.R. §438.408(f)(1)(ii):

²⁹ 42 C.F.R. §438.408(2):

³⁰ 42 C.F.R. §438.420(a); 22 C.C.R. §51014.2(a).

³¹ 9 C.C.R. §1810.405(e)

Որտե՞ղ կարող եմ բողոքներին և գանգատներին վերաբերող տեղեկություններ գտնել:

MHP-ները պետք է տպագիր գրքույքում բացատրեն բողոքը, գանգատը և արագացված գանգատարկման գործընթացը:³² MHP-ները պետք է այս տեղեկատվությունը տրամադրեն Ձեզ՝ փոստով մեկ պատճենը Ձեզ ուղարկելով, էլ.փոստով Ձեզ պատճեն ուղարկելով կամ տեղեկատվությունն առցանց տարածելով և Ձեզ տեղեկացնելով այն ինտերնետ հասցեն, որտեղից կարելի է այդ տեղեկատվությունը գտնել:³³

Ո՞վ է իմ բողոքների կամ գանգատների որոշումները կայացնում:

Բոլոր բողոքները և գանգատները, որոնք առնչվում են բժշկական խնամքի որակին, ներկայացվում են Ձեր MHP-ի գործողությունների համար պատասխանատու բժշկական տնօրենին:³⁴ Ձեր MHP-ն պետք է երաշխավորի, որ այն անձը, ով Ձեր բողոքի կամ գանգատի վերջնական որոշումն է կայացնում որևէ կերպ չպետք է մասնակցած լինի բողոքին կամ գանգատին առնչվող սախորդ որոշմանը: Բացի այդ, որոշում կայացնողը սովորաբար կլինի առողջապահական խնամքի մասնագետ՝ շահառուի առողջական խնդիրը լուծելու կլինիկական փորձով:³⁵

Ես կարո՞ղ եմ օգնություն ստանալ բողոք, գանգատ կամ նահանգային արդար լսում ներկայացնելիս:

Կալիֆորնիայի օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր վարչաշրջան Յիվանդների իրավունքների պաշտպան (PRA) տրամադրի՝ հզորացնելու և աջակցելու հոգեկան առողջության ծառայություններ ստացողներին՝ իրենց քաղաքացիական և մարդկային իրավունքներից օգտվելու համար:³⁶ Դուք կարող եք Ձեր MHP-ից Ձեր վարչաշրջանի PRA-ի կոնտակտային տվյալները խնդրել կամ կարող եք Յիվանդների

³² 42 C.F.R. §438.10(g)(2)(xi), 9 C.C.R. § 1850.205(c)(1)(A):

³³ 42 C.F.R. §438.10(g)(3):

³⁴ 22 C.C.R. § 53858(e)(2):

³⁵ 42 C.F.R. §438.406(b)(2).

³⁶ 9 C.C.R. §863.1(a).

իրավունքների պաշտպանների ցանկը գտնել յուրաքանչյուր վարչաշրջանի համար՝ www.disabilityrightsca.org/pod/pradirectory:

Դուք կարող եք օրինական ներկայացուցիչ ունենալ, ով Ձեզ կներկայացնի բողոքի, գանգատի, արագացված գանգատի գործընթացի ընթացքում կամ նահանգային արդար լսմանը:³⁷ Դուք նաև կարող եք մեկ ուրիշի լիազորել (օրինակ Ձեր ընկերոջը կամ ընտանիքի անդամին)՝ Ձեզ այս գործընթացներում ներկայացնելու համար:³⁸

Եթե Ձեր գանգատն ուղղված է MHP-ին, բայց վերաբերում է պայմանագրային մատակարարին կողմից տրամադրված ծառայություններին, Դուք կարող եք մատակարարին լիազորել՝ Ձեզ ներկայացնելու գանգատի/արագացված գանգատի գործընթացում՝ ընդդեմ Ձեր MHP-ի:³⁹

³⁷ 42 C.F.R. §438.402(c)(1)(ii); 9 C.C.R. §§1850.205(c)(2)&(3):

³⁸ 9 C.C.R. §1850.205(c)(2):

³⁹ 9 C.C.R. §1850.205(c)(2):